ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,

ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/8012/02/24 ք. Երևան
12 Նոյեմբերի 2024թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Արման Օհանյանը ուսումնասիրելով Ռուբիկ Հարությունյան Վաչագանի ԱՁ-ի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի՝ անհատ ձեռնարկատեր Ռուբիկ Հարությունյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2024թ. սեպտեմբերի 06-ի թիվ 682-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց
II
(ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ)

01.10.2024 թվականին Ռուբիկ Հարությունյան Վաչագանի ԱՁ-ն հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի

Բյուրեղավանի համայնքապետարանի՝ անհատ ձեռնարկատեր Ռուբիկ Հարությունյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2024թ. սեպտեմբերի 06-ի թիվ 682-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

04.10.2024 թվականին հա. ԵԴ2/8014/02/24 քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել է Դատարանի դատավոր Ա.Սաֆարյանին:

09.10.2024 թվականի Դատարանի դատավոր Ա.Սաֆարյանի որոշմամբ հայցադիմումը և կից փաստաթղթերը վերադարձվել են Հայցվորին:

Ընկերության ներկայացուցչի կողմից 17.10.2024 թվականին հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:

18.10.2024 թվականին հա. ԵԴ2/8014/02/24 քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել է Դատարանի դատավոր Ա.Սաֆարյանին:

28.10.2024 թվականի Դատարանի դատավոր Ա.Սաֆարյանի որոշմամբ հայցադիմումը և կից փաստաթղթերը վերադարձվել են Հայցվորին:

Ընկերության ներկայացուցչի կողմից թերությունները վերացվելուց հետո եռօրյա ժամկետում՝ 06.11.2024 թվականին հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:

06.11.2024 թվականին հա. ԵԴ2/8014/02/24 քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել է Դատարանի դատավոր Ա.Օհանյանին, իսկ քաղաքացիական գործը Դատարանի դատավոր Ա.Օհանյանին հանձնվել է (հասանելի է դարձել) 07.11.2024 թվականին:

III
(ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ)

<u>1. Դատարանի իրավական վերլուծությունները.</u>

Դատարանը, քննության առնելով ներկայացված հայցադիմումը, գտնում է, որ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր առկա չեն, հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների ու 27.2-րդ գլխով նախատեսված հոդվածների պահանջներին, ուստի ենթակա է վարույթ ընդունման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման

գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Միևնույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հիմք ընդունելով վերոգրյալ հոդվածների պահանջները՝ Դատարանը գտնում է, որ պետք է պատասխանող Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունից պահանջել նշված ապացույցները, որոնք վերջինս պետք է դատարան ներկայացնի որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

<u>1.1. Հայցադիմումը առաջին ատյանի դատարան ներկայացված համարվելու վերաբերյալ Դատարանի իրավական վերլուծությունները.</u>

Անդրադառնալով հայցադիմումը առաջին ատյանի դատարան ներկայացված համարվելու օրվան՝ Դատարանն արձանագրում է.

Թիվ ԿԴ1/4837/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 15.09.2021 թվականին կայացված և օրինական ուժի մեջ որոշմամբ անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կանոնի մեկնաբանմամբ հայցային վաղեմության ժամկետի ճիշտ հաշվարկման հանգամանքին և արձանագրել է հետևյալը.

<<<ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցադիմումի թերությունները վերացնելու համար

առաջին ատյանի դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ստանալու պահից, բացառությամբ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 10-12-րդ կետերով սահմանված դեպքերի, և տրամադրված եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով:

Դատարանի համոզմամբ, Օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կանոնի՝ դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ մեկնաբանությունը հանգում է հետևյալին:

Դատարանի որոշմամբ վերադարձված հայցադիմումը թերությունները վերացվելու և եռօրյա ժամկետում առանց թերությունների կրկին ներկայացվելու դեպքում է միայն համարվում սկզբնապես ներկայացնելու օրը ներկայացված (ըստ Է. Աղայանի <<Արդի հայերենի բացատրական բառարանի>> ¥ք. Երևան, 1976թ.՝ <<կրկին>> բառը նշանակում է <<երկրորդ անգամ>>), իսկ <<սկզբնապես ներկայացնելու օրը>> արտահայտությունն էլ կարող է վերաբերելի լինել բացառապես կրկին ներկայացվածին անմիջականորեն նախորդած հայցադիմումի ներկայացման օրվան, ինչը նշանակում է, որ Օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասը, ***վերադարձված հայցադիմումը հերթական անգամներ ներկայացնելու քանակական սահմանափակումից զերծ լինելով հանդերձ, չի կարող մեկնաբանվել որպես երրորդ և ավելի անգամներ ներկայացված հայցադիմումն առաջին անգամ ներկայացման օրը ներկայացված համարելն արտոնող և դրանով իսկ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածով նախատեսված հիմքի իրավական իմաստը խաթարող կանոն****: Հայցային վաղեմության ժամկետի ընթացքը չի կարող ընդհատվել, քանի դեռ հայցը սահմանված կարգով հարուցված չէ, իսկ այն սահմանված կարգով հարուցվել չի կարող, քանի դեռ դատարանին չի ներկայացվել հայցի հարուցման կանոններին համապատասխանող, այսինքն՝ Օրենսգրքով հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջների որևէ խախտումից զերծ հայցադիմում:* ***Այս կանոնից միակ բացառությունը՝ հայցը սահմանված կարգով հարուցված համարելու օրվա առումով, նախատեսված է Օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասով և հայցադիմումը բազմակի անգամներ (երեք և ավելի անգամ) ներկայացված և վերադարձված լինելու պարագայում կիրառելի է միայն հերթական անգամ ներկայացված հայցադիմումի և դրան անմիջականորեն նախորդած հայցադիմումի նկատմամբ՝ հերթական անգամ ներկայացվածը թերություններից***

զերծ լինելու դեպքում այն անմիջականորեն նախորդած հայցադիմումի ներկայացման օրը ներկայացված համարելու իմաստով*, և որևէ պարագայում չի կարող հանգեցնել հայցային վաղեմության ժամկետի ընթացքի՝ անսահմանափակ ժամկետով ընդհատման կամ, այլ կերպ ասած, հայցային վաղեմության ինստիտուտի իմաստազրկման*:>>:

1.1.1. Վերոնշյալ իրավական վերլուծությունների և դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

<<cabinet.court.am>> էլեկտրոնային համակարգում առկա ապացույցներից հետևում է, որ 01.10.2024 թվականին Ռուբիկ Հարությունյան Վաչագանի ԱՁ-ն հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի՝ անհատ ձեռնարկատեր Ռուբիկ Հարությունյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2024թ. սեպտեմբերի 06-ի թիվ 682-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

04.10.2024 թվականին հա. ԵԴ2/8014/02/24 քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել է Դատարանի դատավոր Ա.Սաֆարյանին:

09.10.2024 թվականի Դատարանի դատավոր Ա.Սաֆարյանի որոշմամբ հայցադիմումը և կից փաստաթղթերը վերադարձվել են Հայցվորին:

Ընկերության ներկայացուցչի կողմից 17.10.2024 թվականին հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:

18.10.2024 թվականին հա. ԵԴ2/8014/02/24 քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել է Դատարանի դատավոր Ա.Սաֆարյանին:

28.10.2024 թվականի Դատարանի դատավոր Ա.Սաֆարյանի որոշմամբ հայցադիմումը և կից փաստաթղթերը վերադարձվել են Հայցվորին:

Ընկերության ներկայացուցչի կողմից թերությունները վերացվելուց հետո եռօրյա ժամկետում՝ 06.11.2024 թվականին հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:

06.11.2024 թվականին հա. ԵԴ2/8014/02/24 քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել է Դատարանի դատավոր Ա.Օհանյանին, իսկ քաղաքացիական գործը Դատարանի դատավոր Ա.Օհանյանին հանձնվել է (հասանելի է դարձել) 07.11.2024 թվականին:

Այս պայմաններում ակնհայտ է, որ 01.10.2024 թվականին Հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ չի ընդունվել, այսինքն՝ այդ օրն օրենքով սահմանված կարգով հայց չի հարուցվել: Վարույթ չի ընդունվել նաև

հայցվորի կողմից 17.01.2021 թվականին կրկին ներկայացված հայցադիմումը, հետևաբար 17.10.2024 թվականին ևս օրենքով սահմանված կարգով հայց չի հարուցվել, և հայցադիմումը 17.10.2024 թվականին ներկայացված համարելու իրավական հիմքը չի ծագել: Միայն 06.11.2024 թվականին երրորդ անգամ ներկայացվելուց հետո է Դատարանը գտել, որ հայցը ենթակա է վարույթ ընդունելու, ինչը նշանակում է, որ այն ներկայացված է համարվում անմիջականորեն նախորդած անգամ ներկայացվելու օրը՝ 17.10.2024 թվականին, և սույն գործով հայցն օրենքով սահմանված կարգով հարուցված պետք է համարվի 17.10.2024 թվականին:

IV
(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 234.5 և 234.6, 234.9, 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցադիմումն ընդունել վարույթ և գործը քննել գրավոր ընթացակարգով:

2. Պատասխանող ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանից պահանջել <<ԿՄԲՀԳՀԾՁԲ-24/18>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Պարզաբանել կողմերին, որ՝

- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրա-պետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.

- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույց-ները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառ-ներով:

- հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվի-րատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 23.12.2024 թվականին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

5. Հայցադիմումը առաջին ատյանի դատարան ներկայացված համարել 17.10.2024 թվականին:

6. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արման Օհանյան

Digitally signed by OHANYAN ARMAN
4014820192
Date: 2024.11.12 14:59:52 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am